ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ուրախությամբ հղում եմ Ձեզ իմ անկեղծ շնորհավորանքները Ձեր ընտրության և գահակալության առթիվ՝ որպես Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց: Թող Սուրբ Երրորդությունը պահպանի Ձեզ և պտղառատ դարձնի Ձեր առաքելությունը հովվապետական Ձեր նոր պաշտոնում: Ուզում եմ նաև հայտնել Ձեզ, թե Հռոմի Եկեղեցին մտածումով և ջերմեռանդ աղոթքով ի սրտե մասնակցում է այն հոգևոր ցնծությանը, որով համակված պետք է լինեն այս պահին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավատացյալները: Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր զավակներին ուղարկում եմ նույնպես իմ սրտագին ողջույնը, խնդրում եմ Աստծուն, որ նրանց տնապես հավատարիմ պահի իրենց քրիստոնեական ինքնությանը:

Այս տոնական օրը Ձեր հարգարժան նախորդի՝ Նորին Սրբություն Վազգեն Ա-ի օրհնությամբ լեցուն հիշատակը ներկա է իմ աղոթքի մեջ: Ես չեմ մոռացել, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հռոմեական Կաթողիկե Եկեղեցու հարաբերությունները մի նոր ընթացք ստացան, երբ Հայ Եկեղեցին որոշեց դիտորդներ ուղարկել Վատիկանի Բ Ժողովին: Այդ մերձեցումը առավել ևս սերտացավ երջանկահիշատակ Կաթողիկոսի պատմական այցելությամբ Հռոմ, Պողոս Զ Պապին, 1970 թ. մայիս ամսին: Հանդիպում, որի ընթացքում նրանք միասին ստորագրեցին մի կարևոր համատեղ հայտարարություն: Այդ ժամանակից ի վեր մեր երկու Եկեղեցիների պատվիրակությունները բնավ չեն դադարել այցելություններ փոխանակել՝ ամրապնդելու համար միության այն կապերը, որոնք մի օր պետք է ի մի բերեն մեզ՝ Հաղորդության նույն սեղանի շուրջ:

Սպասելով այդ ժամանակին, որը, հուսով ենք, մոտ է, իմ վառ ցանկությունն է (վստահ եմ նաև՝ Ձերը) ոչ միայն պահպանել մեր Եկեղեցիների միջև գոյություն ունեցող այդ լավ հարաբերությունները, այլև սերտացնել դրանք և գործակցել առավել եռանդուն կերպով: **Գալիք երրորդ հազարամյակը** խորագիրը կրող իմ առաքելական թղթի մեջ՝ ուղղված Կա-

թողիկե Եկեղեցու եպիսկոպոսական դասին, կղերին և հավատացյալներին, 2000 թվականի հոբելյանի նախապատրաստության կապակցությամբ ես ցանկանում եմ հայտնել, որ երկրորդ հազարամյակի վախճանին քրիստոնյաները կկարողանան ներկայանալ աշխարհին եթե ոչ ամբողջապես միացած, գոնե միմյանց ավելի մոտեցած (հմմտ. հմր. 34):

Եվ որպեսզի «տարբեր դավանությունների պատկանող բոլոր քրիստոնյաների միջև միությունը զարգանա մինչև ամբողջական Հաղորդության հասնելը», ես իմ բաղձանքն եմ արտահայտել, «որ Հոբելյանը լավագույն առիթ հանդիսանա արդյունավետ կերպով համագործակցելու ամեն ինչում, որ մեզ միացնում է, որը բնականաբար ավելի կարևոր է, քան այն, ինչ մեզ բաժանում է: Այս հեռանկարով ինչքան լավ կլիներ, որ հարգելով հանդերձ տարբեր Եկեղեցիների և եկեղեցական համայնքների ծրագրերը, մենք կարողանայինք հասնել էկումենիկ ծրագրերի մշակմանը նախապատրաստելու և իրականացնելու համար Հոբելյանը: Այդպիսով Հոբելյանն ավելի ազդեցիկ ու տպավորիչ կլինի և աշխարհի առաջ կվկայի Քրիստոսի բոլոր հետևորդների աներեր կամքը՝ հնարավորին չափ շուտ իրականացնել Եկեղեցիների ամբողջական միությունը այն վստահությամբ, որ «Աստուծո համար անկարելի ոչինչ չկա» (հմր. 16):

Հայր Աստուծո «զորության» մասին այդ վստահությունը իր ցայտուն արտահայտությունն է գտնում Սուրբ Զատկին նրա Միածին Որդու Հարությամբ. մահը պարտվեց և կուլ գնաց Քրիստոսի հաղթանակին (հմմտ. Ա Կոր. 15, 54): Այս եղելությունը իր ուժեղ ազդեցությունն էր թողել Քրիստոսի աշակերտների վրա մոտ քսան դար առաջ, և այդ օրից ի վեր ոչ ոք չի կարողացել այն ջնջել: Այսօր միշտ այդպիսին է մեր հավատը, այդպիսին է մեր հույսը, այդպիսին է մեր ուրախության աղբյուրը, զատկական այն ուրախության, որ տրված է մեզ, որը միասնաբար հռչակում ենք աշխարհի դիմաց. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ալելուիա»:

Այս զգացումներով և Աստուծո Հոգու արտակարգ զորության մասին վերանորոգված վստահությամբ է, որ հայտնում եմ Ձեզ, սիրելի Եղբայր ի Քրիստոս, իմ խոր և եղբայրական սիրո հավատիքը:

ՀՈՎՀԱՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊ

Վատիկան, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ուրախությամբ տեղեկացանք Ձերդ Սրբության ընտրության մասին որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Սուրբ քաղաք Երուսաղեմից հղում ենք Ձեզ սրտագին շնորհավորանքներ՝ կենարար Փրկչի գերեզմանից վերադարձելով մեր աղոթքները՝ զորացնելու համար Ձերդ Սրբության հոգևոր

Վեհափառ Հայրապետը ընդունում է Հովհաննես-Պողոս Բ-ի ներկայացուցիչ կարդինալ Կասիդիին

Վեհափառ Հայրապետը հայ կաթոլիկ եկեղեցու
պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ-ի եւ նրա շքախմբի անդամների հետ

բարձր առաքելությունը՝ ի ծառայություն Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսական Աթոռի:

Սիրով ի Քրիստոս՝

ԴԻՈԴՈՐՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՒՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

Երուսաղեմ,
16 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Հայաստան, Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Հոգեկան մեծ բերկրանքով տեղեկացանք, որ Դուք ընտրվել եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահակալ: Վրաստանի Ուղղափառ Եկեղեցու և իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ այս պատմական իրադարձության առթիվ:

Հույս ենք հայտնում, որ եղբայրական և բարեկամական այն հարաբերությունները, որ գոյություն ունեն մեր երկու ժողովուրդների միջև, առավել կամրապնդվեն և կզարգանան:

Ձերդ Սրբություն, ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և հովվապետական բեղուն գործունեություն:

Բազում երջանիկ տարիներ ենք ցանկանում նաև Հայ Առաքելական Եկեղեցուն, իսկ Հայոց պետությանը՝ խաղաղություն և հետագա բարգավաճում:

Եղբայրական սիրով ողջագուրում եմ Ձեզ՝

ԻԼԻԱ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թբիլիսի, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Կաթողիկոսարան

Այն պահին, երբ Դուք ստանձնում եք Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդի կարևորագույն պարտականությունը, ես միանում եմ Ձեր հա-

մայնքի հոգևոր ցնծությանը և իմ աղոթքի մեջ հայցում Աստուծո հովանավորությունը Ձեզ վստահված այդ պատասխանատու պաշտոնում:

Ընդունեցեք իմ ակնածալից սիրո հավատիքը ի Քրիստոս:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԱՆ-ԼՅՈՒԻ ՏՈՐԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վատիկան, 4 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, Կաթողիկոսարան

Ձերդ Սրբություն,

Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանից հաճույքով տեղեկացանք որ Ձերդ Սրբությունը Ազգային-Եկեղեցական Ժողովի կողմից ընտրվել է՝ ստանձնելու Հայ Առաքելական Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծանր և պատասխանատու պաշտոնը: Այս առթիվ խնդրում եմ ընդունել իմ և Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Խորհրդի ու նրա անդամ Եկեղեցիների ողջ աշխատակազմի սրտագին շնորհավորանքներն ու աղոթքները: Մենք միշտ պատրաստ ենք մատուցելու մեր ծառայությունը Ձերդ Սրբությանը և հուսով ենք, որ ի մոտո ի վիճակի կլինենք անձամբ բերելու Ձեզ մեր շնորհավորանքները:

Ինչպես բոլոր քրիստոնյաները, այնպես էլ մենք ուրախ ենք հաստատելու Ձեր ընտրության պատմական և դրական արդյունքը: Էջմիածնի Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի միավորումը օրհնություն է համայն հայության և էկումենիկ շարժման համար: Մեր Խորհուրդը հպարտ է հաստատելու, որ Դուք եղել եք և միշտ կմնաք մեր Խորհրդի պատվավոր նախագահներից մեկը:

Խնդրում ենք մեր այս ողջույնները կիսել Տեղապահ Սրբազանի և Ազգային-Եկեղեցական Խորհրդի հետ: Թող Աստված օրհնի և զորացնի Ձեզ, որպեսզի Ձեզ հատուկ շնորհներով կարողանաք կրել հովվապետական և էկումենիկ այն ծանր պատասխանատվությունը, որ Դուք այժմ ստանձնել եք:

Խաղաղությամբ ի Քրիստոս՝

ԴՈԿՏ. ՌԻԱԴ ԺԱՐԺՈՒՐ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Լիմասոլ (Կիպրոս),
10 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Մարոնիտ Եկեղեցու, նրա կղերի և հավատացյալների անունից միանում եմ Ձերդ Սրբությանը խոր գոհունակության զգացումով: Բարեխնամող Աստված, որ կանչում է, կապահովի նաև հաջողության միջոցները:

Միշտ Ձեզ հետ՝ սրտով և մտքով:

ՆԱՍՐԱԼԼԱՀ-ՊԻԵՌ ԿԱՐԴԻՆԱԼ ՍՖԵՅՐ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

Բկերկե—Լիբանան, 10 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Ընդունեք իմ անկեղծ շնորհավորանքները ու մաղթանքները Ձեր ընտրության առթիվ՝ որպես Ծայրագույն Պատրիարք Հայոց փառավոր Հայրապետության: Առ Աստված իմ խոնարհ աղոթքները Ձեզ հետ են և աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի հետ: Թող Աստված օգնական լինի Ձեզ Ձեր պատմական մեծ առաքելության ճանապարհին՝ վասն խաղաղության, միության, սիրո և արդարության:

Սրտանց ողջագուրում եմ Ձեզ:

ՊԱՐԹԵՆԻՈՍ
ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

11 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Հարգարժան և շատ սիրելի Եղբայր,

Այն պահին, երբ ես պատրաստվում էի Ձերդ Սրբությանը հղելու զատկական իմ բարեմաղթանքները, ուրախությամբ իմացա Ձեր ընտրության մասին՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Էջմիածնի գահին:

Սրտանց շնորհավորում եմ և զատկական իմ համբույրի և աղոթքների հետ խնդրում եմ ընդունել հաջողության իմ բարի մաղթանքները Ձեր նոր և բարձր պաշտոնում՝ ի ծառայություն Հայ Եկեղեցու:

Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄ
ՀՈՒՅՆ-ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ,
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Դամասկոս, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Բուլղարիայի Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Սինոդի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ Ձեր ընտրության և գահակալության առթիվ: Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր աշխատանք՝ Քրիստոսի բարի հավատի տարածման և խորացման համար Ձեր հավատացյալ հոտի մեջ:

ՄԱՔՍԻՄ
ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՎ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Սոֆիա, 12 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Մեծ ուրախությամբ և գոհունակությամբ տեղեկացանք Ձեր ընտրության մասին՝ որպես Հայ Առաքելական Եկեղեցու գահակալ: Շնորհավորում ենք Ձեզ մեր սիրելի Հայ Եկեղեցու ողջ հոգևոր դասի հետ միասին:

Մեր եղբայրությունը աղոթում է, որ Սուրբ Հոգին առաջնորդի Ձեզ Ձեր նոր հանձնառության մեջ: Թող Աստված Ձեզ շնորհի երկար քաջառողջ կյանք:

Ձեր եղբայր՝

ԻԳՆԱՏԻՈՍ Դ ՀԱԶԻՄ

Դամասկոս, 10 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ

Սուրբ Էջմիածին, Հայաստան

Ձեր պատգամից ուրախությամբ տեղեկացանք, որ Մեր սիրեցյալ եղբայր և բարեկամ Մեծի Տանն Կիլիկիո Նորին Սրբություն Գարեգին Երկրորդը բարձրացել է հոգևոր նոր աստիճանի՝ դառնալով Հայ Առաքելական Եկեղեցու 131-րդ Ծայրագույն Պատրիարքն ու Կաթողիկոսը Ամենայն Հայոց: Ազգային-Եկեղեցական Ժողովի միջոցով Սուրբ Հոգին գտավ Ս. Լուսավորչի գահի համար արժանավոր և ճիշտ անձը, որն օժտված է նվիրումով, հմտությամբ և կրթական ու վարչական գործերի մեջ բարձր կարողությամբ:

Նորին Սրբության գահակալական հանդիսությունների առթիվ Մենք լիազորել ենք Լիբանանի մեր առաջնորդ Մար Աթանասիոս Պաուլոս Բարսում Արքեպիսկոպոսին՝ ներկայացնելու Մեր անձը:

Ի սրտե շնորհավորում ենք մեր առաքելական քույր Եկեղեցու նորընտիր Կաթողիկոսին, Ազգային-Եկեղեցական Ժողովի անդամներին և հավատացյալներին: Թող նորընտիր Հայրապետը դառնա օրհնություն հայոց մեծ ազգին ի Հայաստան և ի ափյուռս աշխարհի:

Աղոթքներով և բարի մաղթանքներով՝

ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԱ Ա ԻՎԱՍ

ՍԻՐԻԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՊԵՏ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ

Դամասկոս, 8 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբության ընտրությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահին, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, մեր սիրտը լցնում է ուրախությամբ, հույսով և հպարտությամբ:

Այս առիթով ներկայացնում ենք Ձեզ եղբայրական սրտագին շնորհավորանքներ՝ մաղթելով Ձերդ Սրբությանը, Հայ Եկեղեցուն և նրա հավատացյալներին աստվածային օրհնություններ, շնորհներ, երջանկություն, բարօրություն:

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ
ԱՆՏԻՈՔԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԱՏՐԻԱՐՔ

* * *

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա

Սբ. Էջմիածին—Հայաստան

Ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը Ձեր արժանավոր ընտրության առթիվ՝ որպես համայն հայության Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս և որպես հաջորդը երջանկահիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսի:

Աղոթում ենք, որ Աստված զորացնի Ձեզ Ձեր նոր բարձր պարտականությունների կատարման ճանապարհին և օրհնի Ձեր ծառայությունը՝ ի նպաստ հարգարժան Հայ Եկեղեցու և նրա բարեպաշտ ժողովրդի:

Եղբայրական սիրով ցանկանում ենք Ձեզ հաջողություն՝ Ձեր նոր առաքելության մեջ:

ՍԵՐԱՖԻՄ
ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Աթենք, 7 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

Էջմիածին—Հայաստան

Փարիզի Եկեղեցու և իմ կողմից շնորհակալություն Ձեր ընտրության և առաջիկա գահակալության մասին ստացված բարի լուրի համար:

Գոհություն Աստծուն այդ ընտրության համար: Թող օրհնյալ լինի մեր Տերը իր հաստատած մեկ և անբաժանելի Եկեղեցու համար: Թող քահանայապետությունը մի քայլ ևս առաջ մղի Եկեղեցին դեպի ճշմարտություն, եղբայրություն և այնքան ցանկալի միություն:

Թույլ տվեք մասնակցել այս առթիվ Հայ Եկեղեցու ուրախությանը:

Վստահ եղեք իմ և Փարիզի մեր Եկեղեցու հոգևորականների աղոթքներին, այս օրերին, երբ Փրկչի կողմից Ձեզ վստահվում է նման մի պատասխանատու պաշտոն:

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵ
ՓԱՐԻԶԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Փարիզ, 8 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք իմ շնորհավորանքները Ձեր ընտրության առթիվ, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Թող Ամենազորն Աստված առաջնորդի և օրհնի Ձեզ, երբ այժմ Դուք ստանձնում եք ղեկավարությունը ողջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Վստահեցնում եմ Ձերդ Սրբությանը, որ իմ աղոթքները ուղեկցելու են Ձեզ Ձեր բարօր առաքելության ճանապարհին:

Ինչպես մեր սովորությունն է ասել, ցանկանում եմ Ձեզ «Բազում տարիներ»:

Եղբայրաբար ի Քրիստոս՝

ԿԱՐԴԻՆԱԼ Օ'ՔՈՆՆՈՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ

Նյու Յորք, 6 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն, ենք ներկայացնում Մեր ջերմ շնորհավորանքները, Մեր աղոթքների հետ միասին, Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Երուսաղեմից Մեր եղբայրական աղոթքներով լավագույն ապագայի հույս ենք ներշնչում հայ ժողովրդին և Եկեղեցուն: Թող հարուցյալ Քրիստոսը և նրա իմաստության ոգին լինի Ձեզ հետ:

ԿԱՐԴԻՆԱԼ ՄԻՇԵԼ ՍԱԲԲԱՀ

Երուսաղեմ, 7 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԱԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձեր ընտրության կապակցությամբ հղում եմ Ձեզ իմ անկեղծ բարեմաղթությունները, շնորհավորանքներն ու Աստուծո օրհնությունը: Վստահ եմ, որ Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարքը խաղաղություն և երջանկություն կբերի Հայոց Առաքելական Եկեղեցուն: Հուսով եմ, վերստին կհանդիպենք միմյանց:

ԿԱՐԴԻՆԱԼ ԿՅՈՆԻԳ

Վիեննա, 8 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԱԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ես բաժանում եմ հայ ժողովրդի ցնծությունը՝ Սուրբ Էջմիածնում Ձեր գահակալության առթիվ, և հղում իմ սրտագին շնորհավորանքները՝ աղոթելով Ձեզ վստահված վեհ առաքելության հաջողության, խաղաղության և հայ ժողովրդի բարօրության համար:

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՇԻԼ ՍԻԼՎԵՍՏՐԻՆԻ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

Վատիկան, 6 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայաստան, Էջմիածին

Սրտանց շնորհավորում եմ Ձերդ Սրբությանը Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռի գահակալ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Թող Աստված բազմապատկի Ձեր ուժերը առաջիկա Ձեր բարձր ծառայության ճանապարհին՝ ի փառս Աստուծո և ի բարօրություն ձեր Եկեղեցու և ձեր ժողովրդի:

Հավատում ենք, որ Ձերդ Սրբությունը ամեն կերպ կամրապնդի և կզարգացնի մեր երկու Եկեղեցիների միջև գոյություն ունեցող ավանդական եղբայրական կապերը:

Սիրով ի Քրիստոս՝

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԿԻՐԻԼ
ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ

Մոսկվա, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՀ, Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքները՝ Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռի գահակալ ընտրվելու առթիվ:

Ցանկանում եմ Ձեզ Աստուծո օգնականությունը Ձեր բարձր առաքելության ճանապարհին:

Ակնածանքով ու սիրով՝

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՅՈՒՎԵՆԱԼԻ

Մոսկվա, 6 ապրիլի 1995 թ.

* * *

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա

Հայաստան, Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ: Հույս ենք հայտնում, որ Ձեր ընտրությունը կնպաստի Ուկրաինա-

կան Ուղղափառ Եկեղեցու և Կիևի Պատրիարքության հետ եղբայրական հարաբերությունների հաստատումանը և կամրապնդի բարեկամությունը հայ և ուկրաինացի ժողովուրդների միջև:

Աղոթում ենք, որ Աստված օգնական լինի Ձեզ՝ Հայ Առաքելական Եկեղեցուն և համայն հայ ժողովրդին ծառայելու Ձեր բարձր առաքելության մեջ:

Սիրով ի Քրիստոս՝

ՖԻԼԱՐԵՏ
ԿԻԵՎԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

Կիև, 8 ապրիլի 1995 թ.

* * *

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի իմ բոլոր գործակիցների և էկումենիկ (տիեզերական) համայնքի անունից ցանկանում եմ արտահայտել մեր ուրախությունը Ձեր գահակալության առթիվ, որպես 131-րդ Կաթողիկոս Էջմիածնի Սբ. Աթոռի: Ձեր ընտրությունը կարևոր մի իրադարձություն է հայ ժողովրդի վերջին շրջանի պատմության մեջ: Այսպիսով նրանք վերագտնում են իրենց հարազատ ոգեկանությունն ու մշակութային ինքնությունը:

Հայ Եկեղեցին եղել է տեսանելի խորհրդանշանը հայ ժողովրդի միության և գոյատևման: Հուսով ենք, որ Ձեր ընտրությունը կլինի կարևոր մի անկյունադարձ և Ձեր հովվապետական առաքելությունը առիթ կհանդիսանա պատմական դժբախտ եղելությունների պատճառով արմատախիլ եղած ողջ ափյուռքահայությունը համախմբելու իբրև մեկ հոտ:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահին Ձեր բարձրանալը հատուկ իմաստ ունի էկումենիկ շարժման համար: Հայ Եկեղեցու մասնակցությունն ու նրա ծառայությունը էկումենիկ շարժմանը նպաստել է քրիստոնյաների հասարակաց երթին դեպի գլխավոր նպատակ՝ Եկեղեցիների տեսանելի միությունը: Մենք վստահ ենք, որ մեր համագործակցությունը կշարունակվի և կաճի Ձեր առաջնորդության ներքո:

Թող Աստված օրհնի Հայ Եկեղեցին ու նրա ժողովրդին և Ձերդ Սրբությանը պարգևի ուժ, կարողություն և առողջություն՝ ծառայելու համար Քրիստոսի Եկեղեցուն ի Հայաստան:

Ակնածանքով Ձեր՝

ԿՈՆՐԱԴ ՌԱՅԶԵՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Ժնև, 5 ապրիլի 1995 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Հայաստան

Ձերդ Սրբություն,

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի անունից ցանկանում եմ հղել Ձեզ իմ անկեղծ շնորհավորանքները Ձեր ընտրության առթիվ՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Ձեր Եկեղեցին ակտիվորեն ներգրավված է եղել էկումենիկ շարժման մեջ, մասնավորապես Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի աշխատանքներում: Մենք հուսով ենք, որ ավելի խոր և ծավալուն կլինեն մեր հարաբերությունները ու գործակցությունը Ձեր հովանավորության ներքո, առաջիկա տարիներին:

Երջանիկ ենք, որ մեր Կոնֆերանսի փոխնախագահ միտրոպոլիտ Երեմիան՝ Տիեզերական Պատրիարքության ներկայացուցիչը, որ հաստատված է Ֆրանսիայում, կներկայացնի ԵԵԿ-ն Ձեր գահակալության հանդիսությանը: Վստահ ենք, որ այս առթիվ նա իր անձնական ողջույնների հետ կբերի նաև ԵԵԿ-ի բարի մաղթանքները:

Թող Բարին Աստված օրհնի Ձեզ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Աղոթում ենք, որ Ամենաբարձրյալը իր Որդու շնորհներով զորավիգ կանգնի Ձերդ Սրբությանը: Թող զատկական այս փառավոր շրջանը, երբ մենք տոնում ենք մեր Փրկչի հրաշափառ Հարությունը, որպես մնայուն հիշողություն տևապես ուղեկցի Ձեզ Ձեր առաջիկա գործունեության ճանապարհին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԺԱՆ ՖԻՇԵՐ
ԵԵԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ժնև, 5 ապրիլի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Սուրբ Էջմիածին—Հայաստան

Մեծ ուրախությամբ տեղեկացանք Ձեր ընտրության մասին: Մեր հուսալի աղոթքները Ձեզ հետ են, որպեսզի հաջողությամբ առաջնորդեք Մայր Եկեղեցին և նրա ժողովրդին:

ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ՆԱԽԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Լոնդոն, 5 ապրիլի 1995 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Մենք ուրախ ենք Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ձեր ընտրության առթիվ:

Մենք հղում ենք Ձեզ մեր աղոթքները և հայտնում մեր պատրաստակամությունը՝ աջակցելու Ձեզ, որպեսզի շարունակեք Ձեր եպիսկոպոսական առաքելությունը՝ ի ծառայություն Քրիստոսի Եկեղեցուն: Թող Սուրբ Հոգին լցնի Ձեզ շնորհներով, արիությամբ և ուրախությամբ:

Մեր մաղթանքն է, որ Դուք հավատարմությամբ հոգեպես սնեք և հոգ տանեք Ձեր խնամքին վստահված Քրիստոսի բանավոր հոտը:

Թող Ամենազոր Աստուծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու օրհնությունը, բարեգթությունն ու շնորհը լինի Ձեզ վրա և մնա Ձեզ հետ հավիտյանս. ամեն:

Հավատարմությամբ Ձեր՝

ԷԴՄՈՆԴ Լ. ԲՐԱՈՒՆԻՆԳ
ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ
ԱՄՆ-Ի ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

Նյու Յորք, 4 մայիսի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստան

Ձերդ Սրբություն,

Մեր ընդհանուր բարեկամներ՝ Վերապատվելի դոկտ. Մանվել Ճինպաշյանից և Վերապատվելի Լյուսին Ակկադից մեծ հաճույքով և գոհունակությամբ տեղեկացա, որ Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Ես հիշում եմ մեր հանդիպումը Ձեզ հետ Բեյրութում մոտ երկու տարի առաջ: Եվ այժմ ուզում եմ հավաստիացնել Ձեզ, որ աշխարհում Ս. Գրոց Միացյալ Ընկերության բոլոր անդամները աղոթում են Ձեզ վստահված բարձր առաքելության հաջողության համար:

Աստուծո խոսքը թանկ է մեր բոլորի համար, և Դուք կարող եք վստահ լինել, որ Միացյալ Աստվածաշնչային Ընկերությունը պատրաստ է օգնելու Ձեզ Ձեր բոլոր ձեռնարկումներում, որպեսզի Աստուծո խոսքը լինի կենդանի խոսք և դառնա իրականություն բոլոր հավատացյալների կյանքում:

Մենք աղոթող ենք Ձեզ համար, երբ այժմ Դուք ստանձնում եք այս նոր և պատասխանատու պաշտոնը:

Անկեղծորեն Ձեր՝

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ԴՈԿՏ. ՋՈՆ Դ. ԷՐԻԿՍՈՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ
ՄԻԱՑՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Անգլիա, 11 ապրիլի 1995 թ.

ԱՌ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Ի լուր Ձեր արժանավայել ընտրութեան իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, գահակալելու ինքնին Ս. Լուսաւորչի Աթոռին, անսահման հրճուանքով կը փութամ ներկայացնելու իմ եւ բովանդակ Մխիթարեան Միաբանութեան իրաքանչիւր միանձնի սրտագին մաղթանքները:

Գոհութիւն Ամենակալին, որ երջանկայիշատակ եւ անմոռանալի Վազգէն Ա Վեհ Հայրապետին, Ձերդ Հայրութիւնն է որ կը յաջորդէ, բարձր պահելու համար Մայր Հայրենիքի Կաթողիկոսական Աթոռի հմայքը համայն աշխարհի դիմաց, եւ դեռ աւելի, եօթանասուն տարուան համայնավարութենէ վերջ վերածաղկող Հայաստանի քրիստոնէական վերելքին նախախնամական առաջնորդը դառնալու:

Ձենք կրնար նաեւ չյիշել Ձեր միշտ ցուցաբերած բարեացակամ ու հայրական վերաբերումը Մխիթարեան Միաբանութեան հանդէպ ու կըրկնապատիկ մեր ուրախութեան եւ շնորհաւորութիւններուն չմիացնել նաեւ մեր սրտագին ու երախտապարտ շնորհակալութիւնները:

Մեր առ Աստուած փառաբանական աղօթքներուն՝ պիտի կցենք այսուհետեւ նաեւ վառ իղձեր Ձերդ Վեհափառ Տէրութեան համար, հայցելով յարատեւօրէն Սուրբ Հոգւոյն աստուածային լոյսերուն հետ, հաստատ առողջութիւն ու կորով, որպէսզի շատ երկար տարիներ, ի գլուխ համայն Առաքելական Եկեղեցւոյդ Հայաստանեայց, հովուէք անսասան մեր ժողովուրդը, Արարատի ստորոտէն մինչեւ ի սփիւռս աշխարհի:

Ամենախորին մեծարանքով՝

Հ. ԳԷՈՐԳ ՎՐԴ. ՊԱԼԵԱՆ
ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վենետիկ, 5 մայիսի 1995 թ.

* * *

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Ուրախութեամբ կ'ողջունենք Ձեր ընտրութիւնը Լուսաւորչի սրբազան Գահին վրայ, իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Մեր ժողովուրդի համար բացառիկ կարեւորութիւն ներկայացնող, պատմական այս անկիւնադարձին՝ կրօնական եւ ազգային զարթօնքի մեծ արշալոյսին՝ Ձեր հոգեւոր զաւակները, նորանկախ հայրենիքի թէ համա-

տարած Սփիւռքի մէջ, մեծագոյն ակնկալութիւններով իրենց աչքերը Ձեզի սեւեռած են յուսալից: Վստահ ենք, որ Ձեր աստուածատուր ձիրքերով, Ձեր կեանքի փորձառութեամբ եւ աշխատանքի անխոնջ կորովով պիտի արդարացնէք մեր բոլորի յոյսերը՝ Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ բանալով փառահեղ նոր էջ մը: Կը յուսանք, որ Ձեր անձին մէջ պիտի իրականանայ մեր ժողովուրդի մեծ իղձը՝ Հայ Եկեղեցւոյ իրական եւ ամբողջական միութիւնը:

Ջերմօրէն կը մաղթենք, որ Ձեր անձնուէր եւ փորձ ղեկավարութեան տակ շուտով զարգանա հոյլ մը կոչումո՛վ հոգեւորականներու, թրծուած Սահակներու եւ Մեսրոպներու, Նարեկացիներու եւ Շնորհալիներու հոգիով եւ ուսմանական բարձր մակարդակով, որովհետեւ այդ է գրաւականը մեր ժողովուրդի հոգեւոր վերածնունդին:

Այս առթիւ թոյլ տուէք արտայայտելու նաեւ անձնական ցանկութիւն մը: Իբրեւ հայ կաթողիկէ հոգեւորական եւ մանաւանդ իբրեւ Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան մէկ թեւին՝ իմ ջերմագոյն իղձս է, որ շուտով գայ նաեւ օրը Հայ Առաքելական եւ Հայ Կաթողիկէ Եկեղեցիներու միութեան: Ես կը հաւատամ, թէ կարելի է այդ՝ փոխադարձ անկեղծ մերձեցումով:

Մինչ այդ՝ ինձի հետ՝ միաբանակից մեր բոլոր Հայրերը կը շնորհաւորեն Ձեր ընտրութիւնը, մաղթելով Ձեզի աստուածային առատ շնորհքներու հետ՝ նաեւ երկար կեանք եւ քաջառողջութիւն, իրականացնելու համար Ձեր բոլոր աստուածահաճոյ եւ եկեղեցաշէն առաջադրութիւնները:

Աղօթակից միութեամբ, խոնարհ ծառայ՝

Հ. ՊՕՂՈՍ ՎՐԴ. ԳՈՃԱՆԵԱՆ
ԸՆԴՀ. ԱԲԲԱՀԱՅՐ
ՎԻԵՆ. ՄԽԻԹ. ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Վիեննա, 17 ապրիլի 1995 թ.